## ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

**1.** Ի՞նչ է **Apicius Armenia-ն**

Apicius Armenia-ն հյուրընկալության միջազգային դպրոց է, որը գործում է եվրոպական կրթական չափանիշներով և առաջարկում է գործնական գիտելիքների վրա հիմնված կրթական ծրագրեր՝ հյուրընկալության, սննդի, գինու և առողջ ապրելակերպի ուսումնասիրության ոլորտներում:

---

**2.** Ի՞նչ ծրագրեր եք առաջարկում

Դպրոցն առաջարկում է ակադեմիական և կարճաժամկետ մասնագիտական զարգացման ծրագրեր, ինչպես նաև սիրողական վարպետաց դասեր՝ Հյուրընկալության կառավարման (Hospitality Management) և Սնունդ, Գինի, Առողջ Ապրելակերպի Ուսումնասիրություններ (Food, Wine & Wellness Studies) ոլորտներում:

---

**3.** Ուսուցումը ի՞նչ լեզվով է իրականացվում

Դասընթացներն իրականացվում են անգլերենով՝ միջազգային դասախոսների և մասնագետների ներգրավմամբ:

---

**4.** Ո՞րքան է ուսման տևողությունը

Ծրագրերի տևողությունը տարբեր է՝ կախված ընտրած ուղղությունից: Ակադեմիական կրթական ծրագրերի տևողությունը երկու տարի է, կարճաժամկետ զարգացման ծրագրերինը՝ 3 շաբաթ, իսկ սիրողական վարպետաց դասերինը՝ 3-5 ժամ:

---

**5.** Ուսուցումը ավելի շատ տեսական է, թե՞ գործնական

Apicius Armenia-ում ուսուցման մոտեցումը հիմնված է 80% գործնական և 20% տեսական կրթության վրա, որն ապահովում է իրական աշխատանքային միջավայրում ուսուցում:

Ուսուցման հիմքում ընկած է փորձառական ուսուցումը՝ Experiential Learning:

---

**6.** Արդյո՞ք առկա են կրթաթոշակներ

Այո, կրթաթոշակները տրամադրվում են մրցութային կարգով և կարող են կազմել 20%-ից մինչև 80%՝ ծածկելով միայն ուսման վարձավճարը:

Կրթաթոշակի չափը որոշվում է դպրոց ընդունելությունից հետո՝ ֆինանսական վերլուծության արդյունքում: Հաշվի են առնվում նաև դիմորդի մոտիվացիան, ներգրավվածությունը համայնքային կյանքում, կամավորական աշխատանքները, ուս. հաստատության կամ աշխատավայրի կողմից տրամադրված երաշխավորագրերը:

---

**7.** Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ դիմելու համար:

Դպրոց ընդունելության առաջին փուլի համար անհրաժեշտ են.

- Միջնակարգ կրթության/ ավագ դպրոցի/ քոլեջի ավարտական վկայական
- Եթե դիմորդը գտնվում է ավարտական դասարանում/կուրսում, ապա տեղեկանք ուս. հաստատությունից դիմորդի տվյալ տարում միջնակարգ կրթությունը հավաստող վկայական ստանալու/ ուս. հաստատությունը ավարտելու վերաբերյալ:
- Անձնագիր
- Փաստաթղթերը պետք է լինեն հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով. այլ լեզուներով ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է նոտարի կողմից վավերացված թարգմանություն:

---

**8.** Արդյո՞ք նախնական աշխատանքային փորձ պահանջվում է:

Ոչ. կարևոր են ոլորտի նկատմամբ հետաքրքրվածությունը և մոտիվացիան:

---

**9.** Կա՞ն աշխատանքի անցնելու հնարավորություններ:

Այո, դպրոցը համագործակցում է ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ և աջակցում է ուսանողներին աշխատանքի հնարավորությունների ձեռքբերման հարցում:

Բարձր առաջադիմություն և մոտիվացիա ունեցող ուսանողներին տրամադրվում է երաշխավորված աշխատանք՝ տեղական և միջազգային առաջատար նախագծերում ներգրավվելու հնարավորությամբ:

**10.** Ո՞րտեղ է գտնվում դպրոցը:

Apicius Armenia-ն գտնվում է Հայաստանում՝ Դիլիջանում, որը հայտնի է իր բնությամբ և զարգացող զբոսաշրջային միջավայրով:

---

**11.** Ինչպե՞ս դիմել ակադեմիական կրթական ծրագրերին

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց դիմումի ձևը և անցնել անգլերենով անցկացվող առցանց տեսահարցազրույց, որի ընթացքում դիմորդը պատասխանում է 12 հարցի: Հարցազրույցի նպատակն է գնահատել դիմորդի մոտիվացիան, մասնագիտական հետաքրքրությունները և ոլորտի վերաբերյալ պատկերացումները:

Հղումը՝ https://apiciusarmenia.vcv.ru/r/26-27

---

**12.** Կա՞ն արդյոք վճարման ճկուն տարբերակներ:
Այո, հնարավոր են վճարման փուլային տարբերակներ, որը հստակեցվում է պայմանգրի շրջանակներում:

---

**13.** Կա՞ արդյոք կացարանի հնարավորություն:
Այո, ուսանողների համար տրամադրվում են կացարանի տարբերակներ Դիլիջանում՝ ապահոված կոմունալ բոլոր հարմարություններով՝ ամսական սկսած 100 եվրոյից:

---

**14.** Կա՞ հնարավորություն շարունակել ուսումը Իտալիայում:
Այո, ուսանողները հնարավորություն ունեն սկսել ակադեմիական կրթական ծրագիրը f. Դիլիջանում և երկրորդ տարին շարունակել Ֆլորենցիայում գտնվող Ապիցիուս Ֆլորենցիա հյուրընկալության միջազգային դպրոցում:

---

**15.** Ի՞նչ սերտիֆիկացում է տրամադրվում ուսման ավարտին
Ծրագրի ավարտին ուսանողները ստանում են համաշխարհային ճանաչում ունեցող կարիերայի միջազգային վկայական (Professional Career Certificate), որը երաշխավորված է WACS-ի (World Association of Chef Societies) և Ֆլորենցիայի Ամերիկյան Համալսարանի (AUF) կողմից:

---

**16.** Կա՞ տարիքային սահմանափակում:
Ոչ, ծրագրերի համար վերին տարիքային սահմանափակում սահմանված չէ, սակայն առնվազն միջնակարգ կրթությունը ունենալը պարտադիր է:

---

**17.** Ի՞նչ մակարդակի անգլերեն է պահանջվում:
Պահանջվում է անգլերենի առնվազն B1 մակարդակ. IELTS/TOEFL և նմանատիպ այլ հավաստագրումներ չեն պահանջվում:

---

**18.** Կա՞ ընդունելության առանձին գրավոր քննություն:

Առանձին գրավոր քննություն նախատեսված չէ: Ընդունելությունը իրականացվում է դիմումի և առցանց տեսահարցազրույցի հիման վրա:

---

**19.** Ի՞նչ մասնագիտացումներ է տրամադրում դպրոցը

Հյուրընկալության կառավարման ուղղություն.

- Special Event Management – Հատուկ միջոցառումների կազմակերպիչ (Դիլիջանում կամ Ֆլորենցիայում)

-Spa Management – Սպա կենտրոնի կառավարիչ (Ֆլորենցիայում)

-Real Estate and Facilities Management – Անշարժ գույքի շահագործման և սպասարկման կառավարիչ (Ֆլորենցիայում)

-Hospitality Management Reception Professional – Հյուրընկալության մասնագետ (Ֆլորենցիայում)

Սննդի, Գինու և Առողջ Ապրելակերպի Ուսումնասիրություններ ուղղություն.

- Culinary Arts – Chef de Partie – Խոհարար (Դիլիջանում կամ Ֆլորենցիայում)

-Baking & Pastry – Chef de Partie – Հրուշակագործ (Դիլիջանում կամ Ֆլորենցիայում)

-Wine Studies and Enology Junior Sommelie Կրտսեր սոմելիե (Ֆլորենցիայում)

-Wellness, Health, and Nutrition: Support Assistant/Specialist for Nutritionists Սննդաբան (Ֆլորենցիայում)

---

**20.** Ի՞նչ մասնագիտացումներ է հնարավոր ստանալ երկու տարի միայն ք.Դիլիջանում սովորելով:

Հյուրընկալության կառավարման ուղղություն:

- Հատուկ միջոցառումների կազմակերպիչ

Սննդի, Գինու և Առողջ Ապրելակերպի ուսումնասիրություններ ուղղություն

- Խոհարար
- Հրուշակագործ

---

**21.** Ի՞նչ է փորձառական ուսուցումը

Փորձառական ուսուցումը («learning by doing») Apicius Armenia-ի կրթական մոդելի հիմքն է, որտեղ ուսանողները գիտելիքներն ու հմտությունները ձեռք են բերում իրական գործնական փորձի միջոցով:

Ուսուցումն իրականացվում է ոչ միայն լսարաններում, այլ նաև պրոֆեսիոնալ խոհանոցներում և ուսանողների կողմից կառավարվող դպրոց - սրճարանում (CEMI):

Այս միջավայրում ուսանողները անմիջապես ներգրավվում են իրական աշխատանքային գործընթացներում՝ կիրառելով իրենց գիտելիքները գործնականում:

Արդյունքում ձևավորվում են միջազգային մակարդակով մրցունակ մասնագետներ:

---

**22.** Ո՞վքեր են դասավանդում Ապիցիուս Արմենիայում

Apicius Armenia-ում դասավանդում են Իտալիայից և տարբեր երկրներից ժամանած միջազգային փորձ ունեցող մասնագետներ՝ ներառյալ շեֆ խոհարարներ, սոմելյեներ և հյուրընկալության ոլորտի մենեջերներ: Նրանք ներկայացնում են Apicius Florence-ի դասախոսական կազմը և ունեն տարիների պրակտիկ և ակադեմիական փորձ միջազգային ոլորտում:

Դասախոսական կազմին կարող եք ծանոթանալ այստեղ՝ https://apicius.am/faculty

---

**23.** Արդյո՞ք Ֆլորենցիայում և Դիլիջանում ուսուցումը կատարվում է նույն կրթական մոդելով

Այո, ուսուցումն իրականացվում է նույն կրթական մոդելով, ինչ Apicius Florence-ում: Սա մեծ առավելություն է, քանի որ հնարավորություն է տալիս ստանալ միջազգային որակի կրթություն Դիլիջանում՝ առավել մատչելի պայմաններով:

---

**24.** Ո՞րքան են ակադեմիական կրթական ծրագրի ուսման վարձավճարները

- 1-ին տարի, Դիլիջան – €4,000
- 2-րդ տարի, Դիլիջան – €4,000
- 2-րդ տարի, Ֆլորենցիա, Իտալիա – €9,000–€10,000

**25.** Ե՞րբ են սկսվում **2026-2027** թթ ընդունելությունները

**1-**ին փուլ
Դեկտեմբերի 15 – Փետրվարի 1
Արդյունքները կհայտարարվեն Փետրվարի 15-ին
10% զեղչ վաղ դիմորդների համար

**2-**րդ փուլ
Մարտի 1 – Ապրիլի 15
Արդյունքները կհայտարարվեն Ապրիլի 30-ին

**3-**րդ փուլ
Մայիսի 1 – Հուլիսի 15
Արդյունքները կհայտարարվեն Հուլիսի 30-ին

**26.** Ե՞րբ է սկսվում ուսումնական գործընթացը և ինչպիսի՞ն է ակադեմիական ծանրաբեռնվածությունը

Ուսումնական գործընթացը սկսվում է սեպտեմբերից: Ուսուցումը կազմակերպված է սեսիաներով, որոնցից յուրաքանչյուրի տևողությունը կազմում է երեք շաբաթ:

Դասերն անցկացվում են ամեն օր՝ բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի: Յուրաքանչյուր ուսումնական օրը ներառում է առնվազն 3 ժամ 10 րոպե տեսական և գործնական դասեր, որից հետո ուսանողները ներգրավվում են գործնական աշխատանքում՝ դպրոց-սրճարանում:

Այս ձևաչափը ապահովում է ինտենսիվ և փորձառության վրա հիմնված ուսուցում՝ համադրելով տեսական գիտելիքները իրական աշխատանքային միջավայրի հետ: